

ԱՌԱՆՈՐԴ ՄՐԱԶԱՆ ՀՕՐ ԽՕՍԸ  
ԳԼԻՎԼԵՏԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՈՑ  
20-ԱՄԵԱԿԻՆ ԱՌՔԻՈ

Կրնանք անվարան կերպով հաստատել որ մօտ երկու հազար տարիներէ ի վեր Հայ ժողովուրդը իր գոյութիւնն ու ինքնութիւնը կրցած է պահպանել զլիաւորաբար շնորհիւ իր հաւատքին եւ «Քրիստոսանշան կնիքով» դրոջմուած իր նկեղնցիներով, ուր մեր ողկեղնիկ լեզուով նրգուած շարականներն ու արասանուած աղօթքները մխիթարած ու զօրացուցած են Հայ հաւատացեալները:

Մենք փառք կու տանք Աստուծոյ որ մեր ժողովուրդը շարունակելով այդ առաքելութիւնը՝ Միացեալ Նահանգաց մէջ եւս իր նակաի քրտիներով եւ նիւթական մեծ գոյողութիւններով կրցած է կտուցանել փառաւոր նկեղնցիներ, եւ ոչինչ խնայած է զանոնք շէն ու պայծառ զանելու համար: Մեր այս արասայատութեան արացոյններէն մէկն է ԳԼԻՎԼԵՏԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ, որուն 20-ամեակը կը նշուի այսօր:

Ըսանամեակի այս աօնակատարութեամբ համայնքը կը փառաւորէ նաեւ յիշատակը բմաստուն եւ գիտակից այն ազգայիններուն՝ որոնց պայծառ սեսիլքին արդիւքն է որ կը վայելեն այսօրուան անդամները, ինչպէս նաեւ իր զնահասանքն ու երախտագիթութիւնը կը յայանէ անոնց՝ որոնք իրենց օժանդակութիւնը բերին այդ սեսիլքի իրագործման նամբուն մէջ:

Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ արեւործի աօնակատարութիւնը պարծք կը դնէ նաեւ Հոգեւոր Հովիբին, ծխական խորհուրդին, նկեղնցական կազմակերպութեանց եւ բոլոր անդամներուն վրայ նոյն հաւատքով, ոգիով ու խանդավառութեամբ շարունակելու սկսուած այս բարի գործը՝ բարգաւաճ զանելով համայնքի հոգեւոր, կրթական ու մշակութային կեանքը:

Որպէս Առաջնորդ Ամերիկայի Հայոց՝ կօօրհաննք Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ բոլոր հաւատացեալները, եւ կօաղօթենք որ Տէրը միշտ անասան զանէ Հայց. Եկեղեցին եւ մեր հաւատացեալ ժողովուրդը առաջնորդէ դէպի հոգեւոր բարձունքներ:

Սիրոյ ողջունիւ

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH

666 Richmond Road  
Cleveland, Ohio  
44143. U.S.A.

Area Code 216—Tel. 381-6590

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
Գլխավետ, Օհայո

23 Փետրուար, 1984

Գերշ. Տ. Թորգոմ Սրբ. Արք. Մանուկեան,  
Առաջնորդ,  
Առաջնորդարան Հայոց,  
Ի Նիւ Եորկ, Ն.Մ.Ս.

Գերշ. Սրբազան Հայր,  
Ինչպէս ծանօթ է ձեզի, Հանդերձեալ ենք Քիլիկիենոսի մեր Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցւոյ 20-ամեակը նշել մեծ Հանդիսաւորութեամբ, ընդ Նախագահութեամբ ձերդ Սրբազնութեան, յառաջիկայ Ապրիլ 15-ին, 1984:

Ձեր ժամանումի եւ մեկնումի ժամանակացոյցը արդէն իսկ յայտնի է մեզի: Կը մնայ միայն Ձեր Քիլիկիենոսի բնակութեան շարաքովեր շի ժամանակացոյցը պատրաստել մանրամասնեալ ձեւով: Ամիշտպէս որ պատրաստ ըլլայ մեր ժամանակացոյցը կ'ազարկենք զայն ձեզի, որպէս զի տեղեակ ըլլաք ի ժառանգութեան:

Կը յիշէք անշուշտ որ ձեր հաւանութեամբ 20-ամեակի նշումին միացուած է Հայ Նահատակաց տարեկան Յիշատակութիւնը:

Նոյն օրուան ձաշկերոյթ-Տօնակատարութեան համար կը ծրագրուի փոքրածաւալ Յայտագրի պրակ մը պատրաստել, կարգ մը յաւուր պատշաճի տեղեկութիւններ ամփոփելով: Ուրախալի պիտի ըլլար ձեր միջնոյնի եւ Օրհնութեան Գիրը ունենալ, այս առթիւ, ազգուած մերազն ժողովուրդին եւ եկեղեցւոյս հաւատացելոց: Կը յիշէք որ այս մասին ձեզի հետ խօսեր էի եւ գուր ձեր տրամադիր ըլլալը յայտնած էիք, միայն թէ կ'ուզէիք որ Նամակ մը գրուեր ձեզի այդ մասին, ինչոր ահաւասիկ նպատակն է սոյն Գրին:

*Handwritten note:* Կ'ազարկենք

Ձեզի արեւշատութիւն եւ Երկին գործերուն ալ բարւօք կատարում մաղթելով,

Մեամբ համբուրիւ Ձեր Ս. Աննյո,  
Ազօթակից  
*Handwritten signature*  
Տ. Տիրան Ա. ԲՏԵՅ. Փափագեան,  
Հովիւ